«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

IJEVAN BRANCH OF
"YEREVAN STATE UNIVERSITY"
FOUNDATION

STUDENT SCIENTIFIC
SOCIETY

ՀՀ, Իջևան, 4001, Ուսանողական 1,
sssysuib@gmail.com, ijevan.ysu.am

1 Usanoghakan, 4001, Ijevan, RA
Tel: (+374) 77 13-27-00

# ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

## ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի

## Ուսանողական գիտական ընկերության

**(2020-2021թթ. ուստարվա 2-րդ կիսամյակ)**

ք. Իջևան «10» մարտ, 2021թ.

| № | Նախատեսվող միջոցառման բնույթը | Խորագիրը / Թեման | Անցկացման օրը / շաբաթը | Համառոտ նկարագրությունը |
|---|---|---|---|---|
| **Հումանիտար գիտությունների ֆակուլտետ** | | | | |
| 1. | Քննարկում-զրույց | «Զգացմունքն իր տեսակներով» | 23.02-25.02 | Նպատակն է լսարանին ներկայացնել զգացմունքի ու նրա տեսակների մասին և կազմակերպել հետաքրքիր քննարկում-զրույց: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. | Դասախոսություն | «Հայաստանը վաղ քրիստոնեական դարաշրջանում», «Կրոններ» | 05. 03-06. 03 | Դասախոսության նպատակն է ուսանողներին ներկայացնել «Վաղ քրիստոնեություն», «Քրիստոնեական մուտքի պատմություն» թեմաները, անդրադարձ կատարել հայկական մշակույթին, լեզվին, կրոնին: |
| 3. | Դասընթացի շարք | «Ժողովրդի բառն ու բանը» | 10. 03-15. 03 | Քննարկման նպատակն է պահպանել և հանրությանը ներկայացնել մեր ժողովրդի բառն ու բանը: Ուսանողները կհավաքագրեն ավանդություններ, զրույցներ, երգիծական պատմություններ, խաղիկներ, երգեր, օրհնանքներ, անեծքներ և այլն, որոնց միջոցով աշխարհագրական,պատմական, կենցաղային, կրոնական այլ տեղեկություններ կփոխանցեն լսարանին: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4. | Կինոդիտում | «Մայրիկը» | 20. 04-24. 04 | «Մայրիկը» ֆրանսահայ ռեժիսոր Անրի Վերնոյի կենսագրական ֆիլմն է՝ նկարահանված 1991թ.։ Ֆիլմը պատմում է հայոց ցեղասպանության մասին և ներկայացնում Ֆրանսիա գաղթած մի հայ ընտանիքի պատմություն։ |
| 5. | Ասմունքի մրցույթ | «Պոեզիայի գույները» | 10. 04-12. 04 | Մասնակիցները կարող են ասմունքել հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և այլ լեզուներով։ Բոլոր մասնակիցներին տրվելու են շնորհակալագրեր։ Յուրաքանչյուր լեզվով ասմունքողի հաղթող կընտրի դասախոսներից կազմված ժյուրիները։ |
| 6. | Շարադրության մրցույթ | «Հայոց աշխարհում պատերազմ է», «Հողի շունչը», «Ավետաբեր ձնծաղիկը», «Հայրենիքիս ծառատունկը» | 05. 05-08. 05 | Կլինեն տարբեր լեզուներով գրված շարադրություններ։ Հաղթողին կընտրի հատուկ հանձնաժողովը։ Մասնակիցներից երեքը կպարգևատրվեն պատվոգրերով, իսկ առաջին հորիզոնական զբաղեցնողը կխրախուսվի նաև անակնկալ նվերով։ |
| **Տնտեսագիտության ֆակուլտետ** | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7. | Մարքեթինգի վեբինար | «Մարքեթինգը՝ հաջողության բանաձև» | 14.02-16.02 | Վեբինարը կվարի «Զբոսաշրջություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի՝ Լաուրա Ուլիխանյանը։ Վեբինարի ընթացքոում ուսանողներին կփոխանցվեն մարքեթինգի գործիքակազմի և մարքեթինգային հետազոտությունների վերաբերյալ տեղեկատվություններ, կընդգծվի Marketing Mix-ի արդիականությունը, ինչպես նաև ընթացում տեղի կունենա խաղ, quizizz.com կայքի միջոցով։ |
| 8. | Կինոդիտում | «Բանականության խաղեր (Игры разума)» | 05. 03-10. 03 | Ֆիլմի ընթացքում ուսանողները կծանոթանան աշխարհահռչակ մաթեմատիկոսի կյանքին, կտեսնեն, թե ինչ դժվարությունների ու փորձությունների միջով նա անցավ՝ նախքան հաջողության հասնելը։ Կիմանան՝ ինչպես նա դարձավ առաջին մաթեմատիկոսը, ով ստացավ «Նոբելյան մրցանակ», տնտեսագիտության ոլորտում։ |
| 9. | Վեբինար | «Աշխատանքի արդյունավետ որոնում և գրագետ արձագանքում» | 10. 03-15. 03 | Վեբինարը կանցկացնի «Ֆինանսներ» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի՝ Իրա Վարդանյանը։ Վեբինարի ընթացքում կներկայացվեն աշխատանքի ընդունման |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | հիմնական փուլերը, ուսանողներին կփոխանցվեն աշխատանքի գրագետ որոնման, ճիշտ ինքնաներկայացման, ինչպես նաև ռեզյումեի, CV-ի, մոտիվացիոն նամակի գրագետ կազմման հմտություններ: |
| 10. | Ինտելեկտուալ խաղ | «Զբոսաշրջություն» | 15. 03-20. 03 | Խաղն ամբողջությամբ կանցկացվի օնլայն տարբերակով՝ quiziz.com կայքի միջոցով: Կլինեն մասնագիտական ոլորտին վերաբերող բազմաբնույթ հարցեր, որոնք էլ կստուգեն ուսանողների մասնագիտական գիտելիքները: Արդյունքներն ամփոփելուց հետո հաղթող(ներ)ը կստանա(ն) պատվոգիր, իսկ մնացած մասնակիցները՝ մասնակցության հավաստագրեր: |
| 11. | Արշավ | Ճանաչողական այցերը կկրեն պրակտիկ բնույթ «Զբոսաշրջություն» մասնագիտության համար: | 05. 04-18. 04 | Այցի ընթացքում ուսանողները կծանոթանան Տավուշի մարզի հինավուրց պատմամշակութային վայրերից մեկին՝ Կիրանցի վանքին, որը շատերի կողմից մոռացության է մատնված: Դեպի Կիրանցի վանք իրականացվող արշավի ընթացքում «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսանողները բազմալեզու (հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | այլն) ձևաչափով կներկայացնեն վանքի պատմությունը, տեղադիրքը, զբոսաշրջային գրավչությունը, վանքի ունեցած դերը մարզի զբոսաշրջության զարգացման գործում, որի արդյունքում նրանք կխորացնեն զբոսավարման իրենց հմտությունները, ձեռք կբերեն զբոսաշրջիկների առջև ելույթ ունենալու փորձ։ |
| 12. | Ինտելեկտուալ խաղ | «Մոտիվացիոն խաղեր» | 15. 04-20. 04 | Խաղի ընթացքում կկազմվեն թիմեր՝ 4-ական մասնակիցներով, որոնք խաղի առաջին փուլում կլուծեն տնտեսագիտական բառերից կազմված խաչբառ, իսկ երկրորդում՝ quiziz.com կայքի միջոցով կպատասխանեն մասնագիտական հարցերի։ Խաղի վերջում մասնակից թիմերը կստանան հավաստագրեր, հաղթող թիմը՝ պատվոգիր։ |
| 13. | Այց ԿԲ | Ճանաչողական այց և մոտիվացիոն զրույց-քննարկում՝ ԵՊՀ ԻՄ նախկին շրջանավարտ Հ.Քարտաշյանի և ԿԲ այլ աշխատակիցների հետ։ | 20. 04-25. 04 | Հանդիպման ընթացքում ուսանողները կայցելեն ԿԲ փողերի թանգարան, կունենան քննարկում աշխատակազմի հետ և կծանոթանան ԿԲ-ում աշխատանքի ընդունման կարգին։ |

| Բնական գիտությունների ֆակուլտետ | | | | |
|---|---|---|---|---|
| 14. | Սեմինար | «Կրիպտոգրաֆիա և կրիպտանալիզ» | 01. 03-14. 03 | Ուսանողներին կներկայացվի կրիպտոգրաֆիայի պատմությունը, կոդավորման վաղ ու ներկայիս մեթոդներն ու դրանց տարբերությունները, կծանոթանան կոդավորման հակառակ պրոցեսին՝ կրիպտանալիզին ու նրա մի քանի տեսակներին։ |
| 15. | Սեմինար | Ազատ թեմա | 01. 04-14. 04 | Այս սեմինարի թեման կընտրեն կամ կառաջարկեն ֆակուլտետի ուսանողները։ |
| 16. | Սեմինար | «8 թագուհիների խնդիրը» | 01. 05-14. 05 | Ուսանողներին կներկայացվի «8 թագուհիների խնդիրը» խնդիրը, լուծման առանձնահատկությունները, ալգորիթմ, որով համակարգիչը կարողանում է լուծել այս խնդիրը։ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 17. | Կինոդիտում | «Իմիտացիայի խաղը» | 15. 03-28. 03 | «Իմիտացիայի խաղ» գեղարվեստական ֆիլմի դիտում ԻԿՄ մասնագիտության ուսանողների համար: Ուսանողները կծանոթանան Ալան Թյուրինգի գործունեության հետ, կիմանան, թե ինչ դեր է նա խաղացել 2-րդ համաշխարհային պատերազմում, համակարգիչների ու կրիպտանալիզի ստեղծման ու զարգացման հարցերում: |
| 18. | Կոնսուլտացիա | | 1-ին ընթացիկներից 1 շաբաթ առաջ | Ընթացիկ քննություններից առաջ կրտսեր կուրսի ուսանողների համար կկազմակերպվի կոնսուլտացիա-սեմինարներ ուսանողների ընտրած առարկայից (առարկաներից): Սեմինարը կիրականացնեն կամ դասախոսները, կամ ավագ կուրսի ուսանողները: |
| 19. | Կոնսուլտացիա | | 2-րդ ընթացիկներից 1 շաբաթ առաջ | Ընթացիկ քննություններից առաջ կրտսեր կուրսի ուսանողների համար կկազմակերպվի կոնսուլտացիա-սեմինարներ ուսանողների ընտրած առարկայից (առարկաներից): Սեմինարը կիրականացնեն կամ դասախոսները, կամ ավագ կուրսի ուսանողները: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 20. | Մրցույթ | «Լավագույն ծրագրավորող 2020» | Մայիս | Ուսանողներին կտրամադրվի որոշակի ժամանակամիջոց ու մի քանի խնդիր, որոնց ծրագրային իրականացումները(միայն ֆունկցիաները) գրելուց հետո սրանք ենթարկվում են թեստավորման որոշակի մուտքային տվյալների վրա: |
| 21. | Մրցույթ | «Շախմատ» | Կիսամյակի ընթացքում | Միջհամալսարանական շախմատի մրցույթ ԵՊՀ ԻՄ և ինչ-որ մի համալսարանի միջև , ուսանողներին կուղեկցի դասախոս: |
| **Կիրառական արվեստի ֆակուլտետ** | | | | |
| 22. | Մրցույթ | «Աշխարհ, որը մենք ցանկանում ենք տեսնել» | 03. 03-06. 03 | Ուսանողները պետք է ներկայացնեն նկարներ, որոնք կարտահայտեն կամ կառնչվեն խորագրի հետ: Հաղթողը կպարգևատրվի մրցանակով: |
| 23. | Սեմինար-քննարկում | «Մոտիվացնող հանդիպում» | 15. 03-25. 03 | Կհրավիրենք այս ոլորտից փորձագետ, ով կկիսվի իր տարիների փորձով: Կպատմի իր անցած ճանապարհի մասին: |
| 24. | Կինոդիտում | «Արշիլ Գորկի 116» | 15. 04 | Ֆիլմը նվիրված է նկարիչի կյանքի 116 ամյակին: Ֆիլմի նպատակն է ուսանողներին ներկայացնել նկարիչի կյանքը և անցած ուղին: |
| 25. | Պլեներ արշավ | «Գարնան շունչը» | 10. 05-15. 05 | Արշավի ժամանակ ուսանողները հնարավորություն կստանան նկարել բնության գրկում: Օգտվել |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ավելի վառ գույներից գարնանայինլավ տրամադրությունը, նկարին հաղորդելու համար: Բնական լույսի ներքո զգալ լուսաստվերի դերը բնության վրա: |
| 26. | Սեմինար-քննարկում | «Վերածննդի նկարիչներ» | 15. 05-20. 05 | Սեմինար- քննարկման ընթացքում կզրուցենք Վերածննդի գործիչների ստեղծագործական գործունեության մասին: |
| 27. | Այց պատկերասրահ (Երևան) | «Ճանաչենք մեր ազգայինը» | 20. 05-25. 05 | Ուսանողները կծանոթանան մշակութային կոթողներին: Կծանոթանան հայ նկարիչների մի շարք գործերի հետ: |
| **Խմբակների դասընթացներ** | | | | |
| **«Բանասերների խմբակ»** | | | | |
| 29. | Ժամանակակից հայոց լեզու | Հնչյուն, ձայնավոր, բաղաձայն հնչյուններ, երկհնչյուններ, վանկ, շեշտ | Փետրվար ամիս, առաջին շաբաթ | Հնչյունների ընդհանուր բնութագիրը, ձայնավոր, բաղաձայն հնչյուններ, դրանց տեսակները, երկհնչյուններ, զուգահեռ տեսասահիկի ցուցադրում: Ի՞նչ է վանկը, ի՞նչ է շեշտը, առաջադրանքներ վանկի և շեշտի մասին: Մասնակիցների կողմից բանաստեղծական հատվածների ասմունք շեշտադրության կանոնները ամբողջացնելու համար: |
| 30. | Խոսքի մշակույթ | Զրույցի կանոններ, բառագործածության սխալներ | Փետրվար ամիս, առաջին շաբաթ | Խոսքային վարվելակերպի, զրույցի կանոնները: «Էթիկետ զրուցելիս» տեսանյութի ցուցադրում: Բառագործածության |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | սխալները, զուգահեռ տեսասահիկի ցուցադրում: |
| 31. | Հայ գրականություն | Հ. Թումանյանի կյանքը | Փետրվար ամիս, երկրորդ շաբաթ | Հ. Թումանյանի կյանքը, ասույթներ և հետաքրքիր պատմություններ Թումանյանի մասին: Տեսասահիկի ցուցադրում: |
| 32. | Հայ գրականություն | Հ. Թումանյանի ստեղծագործությունները | Փետրվար ամիս, երկրորդ շաբաթ | Հ. Թումանյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Անուշ» պոեմը, քառյակներ, «Մի կաթիլ մեղրը» տեսանյութի ցուցադրում, ստեղծագործությունների վրա հիմնված երգերի ունկնդրում: |
| 33. | Ժամանակակից հայոց լեզու | Ուղղագրություն | Փետրվար ամիս, երրորդ շաբաթ | Ձայնավոր, բաղաձայն հնչյունների ուղղագրություն, երկհնչյունների ուղղագրություն: |
| 34. | Ժամանակակից հայոց լեզու | Ուղղագրություն | Փետրվար ամիս, երրորդ շաբաթ | Մեծատառով գրվող բառերի, գծիկով-անջատ գրության ուղղագրական կանոնները, առաջադրանքներ հիշյալ թեմաներից: |
| 35. | Ժամանակակից հայոց լեզու | Ուղղագրություն | Փետրվար ամիս, երրորդ շաբաթ | Ուղղագրական հետաքրքրաշարժ խաղեր,ուղղագրական վերլուծություններ, ստուգիչ թելադրություն: |
| 36. | Կինոդիտում | «Մենք ենք մեր սարերը» | Փետրվար ամիս, երկրորդ շաբաթ | Պատասխանատու՝ Ռ. Բաղրամյան |
| 37. | Ցերեկույթ | Մայրենի լեզվի միջազգային օր | Փետրվար ամիս, երրորդ | Ցերեկույթը ներառում է տեսանյութ՝ «Մանկական թոթովանքներ», |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | շաբաթ | տեսանյութ՝ «Մայրենի լեզվին նվիրված ասույթներ», տեսանյութ՝ «Ներսես Շնորհալի «Հայոց այբուբենի օրհներգը»», էսսեներ (առավելագույնը 4 հատ), բանաստեղծություններ: |
| 38. | Հայ գրականություն | Եղիշե Չարենցի կյանքը | Մարտ ամիս, առաջին շաբաթ | Եղիշե Չարենցի կյանքն ու գործունեության բնութագիրը: |
| 39. | Հայ գրականություն | Եղիշե Չարենցի ստեղծագործությունները | Մարտ ամիս, առաջին շաբաթ | Եղիշե Չարենցի ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը, նրա բանաստեղծությունները, պոեմները: |
| 40. | Կինոդիտում | Փաստագրական ֆիլմ Եղիշե Չարենցի մասին | Մարտ ամիս, առաջին շաբաթ | Պատասխանատու՝ Ռ. Բաղրամյան |
| 41. | Ժամանակակից հայոց լեզու | Բառի ուսմունք, մենիմաստ, բազմիմաստ բառեր,դարձվածքներ | Մարտ ամիս, երկրորդ շաբաթ | Բառ, բառերի մենիմաստությունը և բազմիմաստությունը: |
| 42. | Ժամանակակից հայոց լեզու | Բառերի ձևաիմաստային խմբերը | Մարտ ամիս, երկրորդ շաբաթ | Համանուններ, հարանուններ, հոմանիշներ, հականիշներ, դրանց տեսակները և բնութագիրը: |
| 43. | Ժամանակակից հայոց լեզու | Բառի կառույց | Մարտ ամիս, երրորդ շաբաթ | Բառի կառույցը՝ արմատներ, ածանցներ, վերջածանցներ և վերջավորություններ: |
| 44. | Ժամանակակից հայոց լեզու | Գործնական առաջադրանքներ | Մարտ ամիս, երրորդ | Կկատարվեն հետաքրքիր խաղեր և առաջադրանքներ գիտելիքների ստուգման և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | շաբաթ | ամրապնդման համար: |
| 45. | Հայ գրականություն | Վահան Տերյանի կյանքը և ստեղծագործությունները | Մարտ ամիս, չորրորդ շաբաթ | Վահան Տերյանի կյանքն ու գործունեությունը, ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: |
| 46. | Ժամանակակից հայոց լեզու | Դիմում, նամակ, արձանագրություն | Մարտ ամիս, չորրորդ շաբաթ | Մասնակիցները կսովորեն գրել դիմում, նամակ, արձանագրություն, որից հետո նրանց կտրվի ժամանակ այս երեքից մեկը ինքնուրույն գրելու համար: Դասի վերջում կքննարկվեն նրանց աշխատանքները: |
| 47. | Հայ գրականություն | Համո Սահյանի կյանքը և ստեղծագործությունները | Ապրիլ ամիս, առաջին շաբաթ | Համո Սահյանի կյանքն ու գործունեությունը, ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: |
| 48. | Ժամանակակից հայոց լեզու | Խոսքի մասեր, գոյական անուն | Ապրիլ ամիս, առաջին շաբաթ | Խոսքի մասերի դասակարգումը: Գոյական անուն, նրա քերականական կարգերը: |
| 49. | Ժամանակակից հայոց լեզու | Գոյականի հոլովի քերականական կարգը | Ապրիլ ամիս, առաջին շաբաթ | Հոլովի քերականական կարգը, հոլովների համակարգը արդի հայերենում, հոլովում: |
| 50. | Ժամանակակից հայոց լեզու | Ածական անուն, թվական անուն | Ապրիլ ամիս, երկրորդ շաբաթ | Ածականի տեսակները, համեմատության աստիճանները, թվականների տեսակները: |
| 51. | Ժամանակակից հայոց լեզու | Դերանուն | Ապրիլ ամիս, երկրորդ շաբաթ | Դերանունների տեսակները ու դրանց բնութագիրը: |
| 52. | Ժամանակակից հայոց լեզու | Բայ | Ապրիլ ամիս, երկրորդ շաբաթ | Բայերի կազմությունը, լծորդությունները, սեռի քերականական կարգը, անկախ և կախյալ դերբայներ, դեմքի ու թվի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | քերականական կարգերը: |
| 53. | Ժամանակակից հայոց լեզու | Բայ | Ապրիլ ամիս, երրորդ շաբաթ | Բայի ժամանակի և եղանակի քերականական կարգերը, անկանոն և պակասավոր բայեր: |
| 54. | Ժամանակակից հայոց լեզու | Մակբայ, կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն | Ապրիլ ամիս, երրորդ շաբաթ | Մակբայների իմաստային դասակարգումը, կապերի, շաղկապների տեսակները, վերաբերականների և ձայնարկությունների տեսակներն ու բնութագիրը: |
| 55. | Ժամանակակից հայոց լեզու | Գործնական առաջադրանքներ | Ապրիլ ամիս, երրորդ շաբաթ | Կկատարվեն հետաքրքիր խաղեր և առաջադրանքներ գիտելիքների ստուգման և ամրապնդման համար: |
| 56. | Ժամանակակից հայոց լեզու | Շարահյուսություն, բառակապակցություն և նախադասություն | Մայիս ամիս, առաջին շաբաթ | Ընդհանուր պատկերացում շարահյուսության մասին, բառակապակցության և նախադասությունների տեսակները: |
| 57. | Ժամանակակից հայոց լեզու | Լրացումներ, կոչական | Մայիս ամիս, առաջին շաբաթ | Գոյականական անդամի լրացումներ, բայական անդամի լրացումներ, կոչականի բնութագիրը: |
| 58. | Ժամանակակից հայոց լեզու | Դերբայական դարձված | Մայիս ամիս, երկրորդ շաբաթ | Դերբայական դարձվածի բնութագիրն ու կետադրությունը: |
| 59. | Ժամանակակից հայոց լեզու | Կետադրություն | Մայիս ամիս, երկրորդ շաբաթ | Կետադրական կանոնների ուսուցում,գիտելիքները ամրապնդող առաջադրանքներ: |
| 60. | Ժամանակակից հայոց լեզու | Կետադրություն | Մայիս ամիս, երկրորդ շաբաթ | Կետադրական կանոնների ուսուցում,գիտելիքները ամրապնդող առաջադրանքներ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 61. | Ժամանակակից հայոց լեզու | Խոսքի պատկերավորման միջոցներ: Բառի, նախադասության և տեքստի բաղադրիչների դասավորություն | Մայիս ամիս, երրորդ շաբաթ | Խոսքի պատկերավորման միջոցները՝ մակդիր, փոխաբերություն, համեմատություն, չափազանցություն: Բառի, նախադասության և տեքստի բաղադրիչների դասավորություն: |
| 62. | Հայ գրականություն | Պետրոս Դուրյանի կյանքը և ստեղծագործությունները | Մայիս ամիս, երրորդ շաբաթ | Պետրոս Դուրյանի կյանքը, նրա բանաստեղծություններն ու թատերախաղերը: |
| 63. | Կինոդիտում | - | Մայիս ամիս, երրորդ շաբաթ | - |
| **«Պատմաբանների խմբակ»** | | | | |
| 64. | Հայկական լեռնաշխարհ | Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը: Գետեր, լճեր: | Փետրվար ամիս, երկրորդ շաբաթ | Ներկայացվելու է Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը, սահմանները, բարձր գագաթները, գետերը, լճերը, ինչպես նաև Մեծ Հայքի նահանգները: |
| 65. | Հայոց ծագումնաբանությունը | Հնդեվրոպական նախահայրենիք: Հայոց ծագումնաբանության վերաբերյալ ավանդազրույցները: | Փետրվար ամիս, երկրորդ շաբաթ | Ներկայացվելու է Հնդեվրոպական նախահայրենիքի սահմանները, նրա տարածվածությունը, ինչպես նաև հայ ժողովրդի ծագման մասին ավանդազրույցները: |
| 66. | Վաղ պետական կազմավորումները | Արատտա, Միտաննի, Հայասա թագավորություններ, Նաիրյան երկրներ: Հայկազունիների Արարատյան թագավորություն: | Փետրվար ամիս, երրորդ շաբաթ | Ներկայացվելու են վաղ պետական կազմավորումները՝ Արատտան, Միտաննին, Հայասան: Խոսելու ենք Հայկազունիների Այրարատյան թագավորության մասին, նրանց պետական կարգի, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | տնտեսության ու մշակույթի մասին։ |
| 67. | Վանի թագավորություն | Թագավորության կազմավորումը, ուժեղացումը | Փետրվար ամիս, երրորդ շաբաթ | Ներկայացվելու է Վանի թագավորության ստեղծումը, խոսվելու է թագավորության հզոր թագավորների արշավանքների ու բարեփոխումների, ինչպես նաև տարածքային ձեռքբերումների մասին։ |
| 68. | Վանի թագավորություն (շարունակություն) | Վանի թագավորության թուլացումն ու անկումը։ | Փետրվար ամիս, չորրորդ շաբաթ | Ներկայացնելու ենք Վանի թագավորության վերջին հզոր արքաներին, ինչպես նաև անկման պատճառները։ |
| 69. | Ամփոփում | Հայկական լեռնաշխարհից մինչև Վանի թագավորության թուլացումն ու անկումը (ներառյալ) | Փետրվար ամիս, չորրորդ շաբաթ | Թեստային աշխատանք |
| 70. | Երվանդունիների դինաստիա | Երվանդունիների հաստատումը, Երվանդ Սակավակյաց, Տիգրան Երվանդյան։ | Մարտ ամիս, առաջին շաբաթ | Ներկայացնելու ենք Երվանդունիների հիմադրումը, Երվանդ Սակավակյացի գործունեության, մարական գերիշխանության և Տիգրան Երվանդյանի գործունեության մասին։ |
| 71. | Հնդկաստան | Հնդկաստանի աշխարհագրական դիրքը, սկզբնաղբյուրները, կաստաներ։ | Մարտ ամիս, առաջին շաբաթ | Ներկայացնելու ենք Հնդկաստանի աշխարհագրական դիրքի, բնական պայմանների, բնակչության կազմի, բուսական և կենդանական աշխարհի մասին։ Խոսելու ենք Հնդկաստանի սկզբնաղբյուրների մասին։ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 72. | Հայաստանը Աքեմենյան աշխարհակալության մեջ։ Երվանդունիների անկումը։ | Դարեհ I։ Բեհիսթունյան արձանագրություն։ Քսենոփոնը և Հայաստանը։ Երվանդ II։ Հայաստանի անկախացումն ու անկման պատճառները։ | Մարտ ամիս, երկրորդ շաբաթ | Ներկայացնելու ենք Հայաստանը Աքեմենյան աշխարհակալության մեջ, Բեհիսթունյան արձանագրությունը, ինչպես նաև Քսենոփոնի վկայությունները։ Ներկայացնելու ենք Հայաստանի անկախությունը Աքեմենյան Պարսկաստանից և անկման պատճառները։ |
| 73. | Արտաշեսյան դինաստիայի հիմնումը | Արտաշես I-ի բազմելը հայոց գահին, արտաքին և ներքին քաղաքականությունը։ Տիգրան I։ Արտավազդ I։ | Մարտ ամիս, երկրորդ շաբաթ | Ներկայացնելու ենք Արտաշեսյան հարստության հիմնումը, Արտաշես I-ի արտաքին և ներքին քաղաքականության մասին, Տիգրանի և Արտավազդի գահակալությունը։ |
| 74. | Հնդկաստան (շարունակություն) | Մանուի օրենքները։ Մագաթխայի բարձրացումը։ Մաուրյան տերության ստեղծումը։ | Մարտ ամիս, երրորդ շաբաթ | Ներկայացնելո ենք Մանույի օրենքները, ինչպես նաև Հնդկաստանի մի շարք քաղաքներից Մագաթխայի բարձրացումը, Չանրագուպտայի կողմից Մաուրյան պետության ստեղծումն ու Աշոկայի օրոք բուդդիզմի ընդունումը։ |
| 75. | Տիգրան II Մեծ։ | Տիգրանի բազմելը հայոց գահին։ Հայ-հռոմեական պատերազմը։ | Մարտ ամիս, երրորդ շաբաթ | Ներկայացնելու ենք Տիգրանի վերադարձը գերությունից։ Խոսելու ենք նրա արշավանքների, տարածքային բաժանումների մասին։ Ներկայացնելու ենք հայ-հռոմեական պատերազմի առիթի, պատճառի ու |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | հետևանքների մասին։ |
| 76. | Կինոդիտում | «Իններորդ լեգեոնի արծիվը» | Մարտ ամիս, չորրորդ շաբաթ | Ֆիլմում ներկայացվում է, որ հռոմեական ցենտուրյոն Մարկը փորձում էր վերադարձնել 9-րդ լեգեոնի արծիվը, որի կորուստը նսեմացնում էր հռոմեական բանակին և իր հորը, ով բրիտանացիների դեմ կռվի ժամանակ զոհվել էր, իսկ արծիվը՝ ընկել նրանց ձեռքը։ |
| 77. | Ամփոփում | Երվանդունիների դինաստիայից մինչև հայ-հռոմեական պատերազմը (ներառյալ), ինչպես նաև Հնդկաստանը ամբողջությամբ։ | Մարտ ամիս, չորրորդ շաբաթ | Թեստային աշխատանք |
| 78. | Արտավազդ II | Արտավազդ II-ի արտաքին և ներքին քաղաքականությունը, հռոմեա-պարթևական պատերազմը։ | Ապրիլ ամիս, երկրորդ շաբաթ | Ներկայացնելու ենք Արտավազդ II-ի գահակալությունը նրա արտաքին և ներքին քաղաքականությունը, ինչպես նաև հռոմեա-պարթևական պատերազմը և այդ պատերազմում Հայաստանի դերն ու կողմնորոշումը։ |
| 79. | Հին Չինաստան | Չինաստանի աշխարհագրական դիրքը։ Ցին Շի Հուանդի։ | Ապրիլ ամիս, երկրորդ շաբաթ | Ներկայացնելու ենք Հին Չինաստանի աշխարհագրական դիրքը, բնական առանձնահատկությունները, գլխավոր գետերը։ Ներկայացնելու ենք Ցին Շի Հուանդիի արտաքին քաղաքականությունը, բարեփոխումները և մեծ պատի կառուցումը։ |
| 80. | Արտաշեսյան արքայատոհմի | Արտաշեսյան հարստությունը | Ապրիլ ամիս, | Ներկայացնելու ենք Տիգրան III-ի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | անկումը | վերջին գահակալների օրոք։ | երրորդ շաբաթ | գահակալությունը և նրանից հետո Հայաստանում տիրող խառնաշփոթ իրավիճակը և թագավորության անկման պատճառները։ |
| 81. | Հայաստանը I դարի սկզբին։ Արշակունյաց հարստության հիմնումը | Հայկական գահը դրածոների օրոք։<br>Կորբուլոնի արշավանքը Հայաստան։ Տրդատ I։ | Ապրիլ ամիս, երրորդ շաբաթ | Ներկայացնելու ենք Հայաստանը դրածո թագավորների օրոք, Կորբուլոնի ավերիչ արշավանքը Հայաստանի քաղաքներ, ինչպես նաև Տրդատի մեկնումը Հռոմ և Արշակունիների դինաստիայի հիմնումը։ |
| 82. | Հունաստան | Հունաստանի աշխարհագրական դիրքն ու կլիմայական պայմանները։ | Ապրիլ ամիս, չորրորդ շաբաթ | Ներկայացնելու ենք Հունաստանի աշխարհագրական դիրքը, աշխարհագրական բաժանումը, կլիմայական պայմանները, բնական հարստությունները։ |
| 83. | Կինոդիտում | «Գարեգին Նժդեհ» | Ապրիլ ամիս, չորրորդ շաբաթ | Ֆիլմը ներկայացնում է Նժդեհի պայքարը թուրքերի հանդեպ և Զանգեզուրի պաշտպանությունը, ինչպես նրա բանտարկությունն ու վտարումը մայր հողից։ |
| 84. | Ամփոփում | Արտավազդ II-ից մինչև Արշակունյաց հարստության հիմնումը (ներառյալ) | Ապրիլ ամիս, հինգերերդ շաբաթ | Թեստային աշխատանք |
| 85. | Հայաստանը I դարի վերջից մինչև II դարի վերջը | Սանատրուկ II։ Վաղարշ I։ Հայոց գահը օտար զավթիչների ձեռքին։ | Մայիս ամիս, առաջին շաբաթ | Ներկայացնելու ենք Սանատրուկ II և Վաղարշ I թագավորների գործունեությունը, ինչպես նաև նրանցից հետո հայոց գահի զավթումը օտարների կողմից։ |
| 86. | Հայաստանը Տրդատ III Մեծի օրոք | Տրդատ Մեծի գահակալումն ու քրիստոնեության | Մայիս ամիս, երկրորդ | Ներկայացնելու ենք Տրդատ Մեծի գահ բարձրանալը, նրա |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ընդունումը։ | շաբաթ | գործունեությունը և քրիստոնեության ընդունումը Հայաստանում։ |
| 87. | Հին Հունաստանի սկզբնաղբյուրները | Հերոդոտոս, Թուկիդիդես, Արիստոտել, Ստրաբոն, Դիոդորոս Սիկիլիացի, Պլուտարքոս։ | Մայիս ամիս, երկրորդ շաբաթ | Ներկայացնելու ենք Հին Հունաստանի պատմության սկզբնաղբյուրները՝ գրված հույն և հռոմեացի պատմագիրների կողմից։ |
| 88. | Հայաստանը IV դարում | Խոսրով Կոտակ, Տիրան, Արշակ II, Պապ, Վարազդատ թագավորներ։ | Մայիս ամիս, երրորդ շաբաթ | Ներկայացնելու ենք IV դարում հայոց թագավորների գործունեությունը, նրանց քաղաքականությունը։ |
| 89. | Արշակունյաց դինաստիայի անկումը | Հայաստանի առաջին բաժանում։ Գրերի գյուտը։ Վերջին գահակալները։ | Մայիս ամիս, երրորդ շաբաթ | Ներկայացնելու ենք Հայաստանի առաջին բաժանումն ու բաժանման պատճառները, ինչպես նաև գրերի գյուտը, վերջին գահակալներին ու Արշակունիների անկումը։ |
| 90. | Հույն-պարսկական պատերազմները | Պարսիկների արշավանքները Հունաստան, պատերազմի ընթացքը, ավարտը։ | Մայիս ամիս, չորրորդ շաբաթ | Ներկայացնելու եք պարսկական առաջին արշավանքները Հունաստան, հույն-պարսկական պատերազմի առիթը, պատճառները, ինչպես նաև պատերազմի ընթացքն ու ավարտը։ |
| 91. | Պելոպոնեսյան պատերազմը | Պատճառները, առիթը։ Պատերազմի առաջին շրջանը, «Արքիդամոսյան պատերազմը», Նիկիասի հաշտությունն ու Սիկիլիական արշավանքը։ Պատերազմի եզրափակիչ փուլը։ | Մայիս ամիս, չորրորդ շաբաթ | Ներկայացնելու ենք Պելոպոնեսյան պատերազմի պատճառները, առիթը։ Խոսելու ենք պատերազմի ընթացքի, Նիկիասի հաշտությունն ու Սիկիլիական արշավանքը և պատերազմի ավարտը։ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 92. | Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումները | Ալեքսանդրի պարսկական արշավանքն ու Պարսկաստանի նվաճումը, Մակեդոնացու տերությունը, պայքարը Հնդկաստանում: Հելլենիզմի ձևավորումը: | Մայիս ամիս, հինգերորդ շաբաթ | Ներկայացնելու ենք Ալեքսանդր Մակեդոնացու բազմելը գահին, նրա պարսկական արշավանքը, Պարսկաստանի նվաճումը, ինչպես նաև Մակեդոնացու տերությունն ու հելլենիզմի ծնունդը: |
| 93. | Ամփոփում | Ամփոփելու ենք կիսամյակի ողջ նյութը: | Մայիս ամիս, հինգերորդ շաբաթ | Խմբակային ամփոփիչ մեծ խաղ |

| «Տնտեսագիտության խմբակ» | | | | |
|---|---|---|---|---|
| 94. | Հանրահաշիվ | Բազմանդամի հասկացությունը, հատկությունները: Կատարյալ տեսքի բազմանդամներ: | Փետրվար ամիս, երկրորդ շաբաթ | Ներկայացվելու է բազմանդամի հասկացությունը, ինչ հատկություններով է օժտված բազմանդամը և որոնք են հանդիսանում կանոնավոր տեսքի բազմանդամներ և ինչպես բազմանդամը բերել կանոնավոր տեսքի: |
| 95. | Հանրահաշիվ | Բազմանդամի գումար, տարբերություն և արտադրյալ: | Փետրվար ամիս, երկրորդ շաբաթ | Ներկայացվելու է՝ ինչպես ենք կատարում գործողություններ բազմանդամների հետ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 96. | Հանրահաշիվ | Կոտորակներ, կոտորակների հետ գործողություններ | Փետրվար ամիս, երրորդ շաբաթ | Ներկայացվելու է կոտորակ հասկացությունը, իր տեսակները և կոտորակների հանում, գումարում, բաժանում բազմապատկում։։ |
| 97. | Հանրահաշիվ | Մեկ անհայտով երկրորդ աստիճանի անհավասարումներ | Փետրվար ամիս, երրորդ շաբաթ, | Ներկայացվելու է՝ անհավասրումը ինչ է, տեսակները, և մեկ անհայտով երկրորդ աստիճանի անհավասարումների լուծման կարգը։ |
| 98. | Հանրահաշիվ | Թվային հաջորդականություն | Փետրվար ամիս, չորրորդ շաբաթ, | Ներկայացվելու է թվային շարքերի էությունը, վարժությունների միջոցով կգտնենք հաջորդականության անդամները։ |
| 99. | Հանրահաշիվ | Ածանցյալ | Փետրվար ամիս, չորրորդ շաբաթ, | Ներկայացվելու է ածանցյալի էությունը և ածանցման կանոնները։ |
| 100. | Երկրաչափություն | Վեկտորներ | Մարտ ամիս, առաջին շաբաթ. | Ներկայացվելու է վեկտորը, էությունը, գորմարումը և հանումը։ |
| 101. | Հանրահաշիվ | Տոկոսներ | Մարտ ամիս, առաջին շաբաթ, | Ներկայացվելու է տոկոսների հաշվման կանոնները։ |
| 102. | Երկրաչափություն | Ճառագայթ, ուղղահայաց և զուգահեռ ուղիղներ | Մարտ ամիս, երկրորդ շաբաթ, | Ներկայացվելու է՝ ինչ է ճառագայթը, ուղիղը և առանձին ներկայացվելու են զուգահեռ և ուղղահայաց ուղիղները։ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 103. | Հանրահաշիվ | Կորդինատային հարթություն | Մարտ ամիս, երկրորդ շաբաթ, | Ներկայացվելու է կորդինատային հարության էությունը, կետերի միացումը կորդինատային հարթության մեջ: |
| 104. | Երկրաչափություն | Անկյուններ | Մարտ ամիս, երրորդ շաբաթ | Ներկայացվելու է անկյան գաղափարը, անկյան տեսակները՝ բութ, սուր և ուղիղ: |
| 105. | Հանրահաշիվ | Պարզ թվերի քառակուսի արմատ | Մարտ ամիս, երրորդ շաբաթ | Ներկայացվելու են պարզ թվերի քառակուսի արմատ գտնելու կարգը: |
| 106. | Երկրաչափույուն | Եռանկյուն | Մարտ ամիս, չորրորդ շաբաթ | Ներկայացվելու է,թե ինչ է եռանկյունը, տեսակները, մակերեսի և պարագծի հաշվարկը: |
| 107. | Երկրաչափություն | Ուղղանկյուն | Մարտ ամիս, չորրորդ շաբաթ, | Ներկայացվելու է՝ ինչ է ուղղանկյունը, նրա պարագծի և մակերեսի հաշվարկը: |
| 108. | Երկրաչափություն | Շրջանի շառավիղ, տրամագիծ, պարագիծ և մակերես: | Ապրիլ ամիս, երկրորդ շաբաթ, | Ներկայացվելու է շրջանի շառավղի հասկացությունը, տրամագծի հասկացությունը, շրջանագծի մակերեսի և պարագծի հաշվարկման բանաձևեր: |
| 109. | Տնտեսագիտությանն տեսություն | Տնտեսագիտության առարկան և նրա խնդիրները | Ապրիլ ամիս, երկրորդ շաբաթ | Ներկայացվելու է տնտեսագիտության՝ որպես առարկայի էությունը, նրա խնդիրները, վերարտադրության փուլերը: |
| 110. | Տնտեսագիտության տեսություն | Տնտեսական աճ: Տնտեսության նպատակները և խնդիրները | Ապրիլ ամիս, երրորդ շաբաթ | Ներկայացվելու է՝ ինչ է տմտեսական աճը, տնտեսության նպատակաները և խնդիրները: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 111. | Տնտեսագիտության տեսություն | Շուկայական տնտեսություն: | Ապրիլ ամիս, երրորդ շաբաթ | Ներկայացվելու է շուկայական տնտեսության ձևավորումը, բարիքի արժեքը: |
| 112. | Տնտեսագիտության տեսություն | Փողը և նրա գործառույթները | Ապրիլ ամիս, 4-րդ շաբաթ | Ներկայացվելու է փողի առաջացումը, էությունը և գործառույթները: |
| 113. | Տնտեսագիտության տեսություն | Պահանջարկի և առաջարկի տեսություն: | Ապրիլ ամիս, չորրորդ շաբաթ | Ներկայացվելու է պահանջարկի տեսությունը, առաջարկի տեսությունը և հավասարակշռությունը բարիքների շուկայում: |
| 114. | Տնտեսագիտություն | Արտադրության գործոնները և գործոնային եկամուտ | Մայիս ամիս, առաջին շաբաթ | Ներկայացվելու են աշխատանք և աշխատավարձ, ռենտա և հող, կապիտալ և տոկոս հասկացությունները: |
| 115. | Տնտեսագիտություն | Ձեռնարկատիրական գործունեություն և շահույթ | Մայիս ամիս, առաջին շաբաթ | Ներկայացվելու է՝ ինչ է ձեռնարկատիրությունը, ով է ձեռնարկատերը, ինչ է ձեռնարկատիրական գործունեությունը: |
| 116. | Տնտեսագիտություն | Բանկերը և դրանց գործառույթները | Մայիս ամիս, երկրորդ շաբաթ | Ներկայացվելու է բանկերի առաջացումը, դրանց էությունը և գործառույթները: |
| 117. | Տնտեսագիտություն | Վարկեր և արժեթղթեր | Մայիս ամիս, երկրորդ շաբաթ | Ներկայացվելու է վարկ հասկացությունը, արժեթղթերի տեսակները: |
| 118. | Տնտեսագիտություն | Տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը | Մայիս ամիս, երրորդ շաբաթ | Ներկայացվելու են տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը և դրա բացակայության հետևանքները: |
| 119. | Տնտեսագիտություն | Պետական բյուջե: Հարկեր և տուրքեր | Մայիս ամիս, | Ներկայացվելու է պետական բյուջեի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | երրորդ շաբաթ | հասկացությունը, դրա էությունը և հարկերի ու տուրքերի դերը պետական բյուջեի կազմում: |
| 120. | Տնտեսագիտություն | Պետության սոցիալական քաղաքականություն | Մայիս ամիս, չորրորդ շաբաթ | Ներկայացվելու են բնակչության եկամուտները և դրանց անհավասարությունը: |
| 121. | Տնտեսագիտություն | Միջազգային տնտեսական հարաբերություններ | Մայիս ամիս, չորրորդ շաբաթ | Ներկայացվելու է արտաքին առևտուրը, կապիտալի արտահանումը, արժութային հարաբերությունները: |

| **«Տուրիզմի խմբակ»** | | | | |
|---|---|---|---|---|
| 122. | Զբոսաշրջության հիմունքներ | Զբոսաշրջության դերը,նշանակությունը | Փետրվար ամիս, առաջին շաբաթ | Ներկայացվելու է զբոսաշրջության տեսակները, էությունը: Նպատակն է հասկանալ, թե ինչ է իրենից ներկայացնում զբոսաշրջությունը, որն է ուսումնասիրման առարկան և օբյեկտը: |
